Ե. Պ. ԱՂԱՅԱՆ

ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ XII ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍՈՒՄ

1965 թ. օգոստոսի 29-ից մինչև սեպտեմբերի 5-ը Վիեննայում տեղի ունեցավ պատմաբանների միջազգային XII կոնգրեսը, որին մասնակցում էին աշխարհի տարբեր երկրներից մոտ երեք հազար պատմաբաններ։ Ի տարբերություն նախորդ՝ Հռոմի և Ստոկհոլմի կոնգրեսների այս կոնգրեսին մասնակցում էին սոցիալիստական երկրների բավական մեծաքանակ ներկայացուցիչներ, որոնք և զգալի ազդեցություն թողեցին կոնգրեսի ողջ ընթացքի վրա։ Սովետական դելեգացիան կազմված էր ավելի քան 70 ականավոր գիտնականներից։

Կոնգրեսը իր վեց սեկցիաներում և ենթասեկցիաներում քննարկեց 100-ից ավելի պատմագիտական թեմաներ։ Կոնգրեսը համաշխարհային առումով պատմագիտական մտքի զարգացումը ընդհանրացնող կարևոր օղակ հանդիսացավ, որտեղ ակնառու կերպով հանդես եկավ մարքս-լենինյան պատմագիտության առաջատար դերն ու նրա վճռական նշանակությունը մարդկային հասարակության պատմության մեջ։ Մեր միտքը հաստատելու համար ընթերցողների ուշադրությունն ենք հրավիրում միայն մի քանի պրոբլեմների քննարկման վրա։

«Պատմագիտական մտքի էվոլյուցիան XX դարի կեսերին» պրոբլեմի մասին զեկուցումը ներկայացրել էին սովետական գիտնականներ ակադեմիկոս Մ. Վ. Նեչկինան, Վ. Տ. Պաշուտոն և Ե. Բ. Չերնյակը։ Զեկուցումով հանդես եկավ Մ. Վ. Նեչկինան, որը ցույց տվեց սովետական մարքս-լենինյան պատմագիտական մտքի զարգացումն ու նրա ազդեցությունը սովետական ժողովուրդների մշակույթի վրա։ Զեկուցումը մտքերի ակտիվ փոխանակություն առաջացրեց, որին մասնակցեցին 12 հոգի, որոնցից 7-ը սոցիալիստական երկրներից։ Ուշագրավ էր այն փաստը, որ սոցիալիստական երկրների բոլոր պատմաբանները միահամուռ կերպով պաշտպանեցին զեկուցման մեջ առաջ քաշված մարքսիստական տեսակետները և լրացրին սոցիալիստական երկրների կյանքից բերվող կոնկրետ փաստերով։ Ելույթ ունեցողները (Տոնոդի — Հունգարիա, Կորմանով — Լեհաստան, Լոտցկե — ԴԴՌ, Կարոլա — Բուլղարիա, Բարտա — Չեխոսլովակիա, Ստանեսկու — Ռումինիա) ընդգծում էին մարքսիստական մեթոդոլոգիայի կարևոր նշանակությունը գիտության անկաշկանդ զարգացման, հասարակական բարդ երևույթների ընդհանրացման և օրինաչափությունների հայտնաբերման գործում։ Պրոֆ. Կորմանովը նշեց Լեհաստանի մարքսիստական պատմագրության յուրահատկություններն ու նրա զարգացման ուղիները, որը հիմնական ուշադրությունը կենտրոնացնում է դասակարգի և գյուղացիության, ժողովրդական մասսաների գործունեության

լուսաբանմանը։ Նա բնութագրեց Լեհաստանի այն հիմնարկների գործունեությունը, որոնք ուսումնասիրում են գյուղատնտեսության, արդյունաբերության, ինչպես նաև ժողովրդի ու կուսկազմակերպությունների պատմությունը։

Կարոլան Բուլղարիայի պատմագրության օրինակով ցույց տվեց Մ. Վ. Նեչկինայի զեկուցման մեջ մեթոդոլոգիական պրոբլեմների ճիշտ դրվածքը։ Լոտցկեն կարծիք հայտնեց մարքսիստ և ոչ-մարքսիստ պատմաբանների համատեղ աշխատանքի հնարավորությունների մասին։ Այդ բանը նա հատկապես հնարավոր էր գտնում պատմական փաստերի («Պատմության աղյուսակները») հայտնաբերման ու գնահատման, պատմական իրողությունների ըմբռնման խնդրում և այլն։ Ռումինիայի պատմաբանները նույն օպտիմիստական տրամադրություններն էին արտահայտում։ Դայկովիչը (Բուխարեստ) այդ համագործակցության կարևոր ուսումնասիրության նյութ էր համարում համատեղ, միասնական պատմական տերմինոլոգիայի ուսումնասիրումն ու մշակումը։ Պրոֆ. Ստանեսկուն ընդգծեց պատմական աղբյուրի կարևոր նշանակությունը որպես պատմական փաստի՝ մի կողմից, և որպես պատմական պրոցեսի օբյեկտիվորեն զարգացման հետևանք՝ մյուս կողմից։

Կոնգրեսին մասնակից բուրժուական պատմաբան Կոտովսկին (Արևմտյան Բեռլին) անգամ «ընդունեց» սովետական պատմագրության հաջողությունները, բայց ճգնում էր ցույց տալ, որ իբր մարքսիստական մեթոդը որոշ էվոլյուցիա է ապրում՝ մոտենալու ոչ մարքսիստական պատմագրությանը։ Սակայն նա ձեռնպահ մնաց նշելու պատմական գիտության, ըստ նրա ի տարբերություն բնական գիտությունների, «ոչ ճշգրիտ» գիտության զարգացման հեռանկարները։

Մարքսիստական հայացքների դեմ խիստ թշնամական ելույթներ ունեցան բուրժուական գիտնականներ Օ. Խալեցկին (ԱՄՆ), Մ. Լացկոն (Վատիկան) և ուրիշներ, որոնք ցանկանում էին նսեմացնել սովետական պատմաբանների գիտական ուսումնասիրությունների նշանակությունը։ Նշում էին նաև, որ իբր ՍՍՌՄ-ում գիտությունը ազատ չի զարգանում, աղբյուրագիտական նյութեր չեն հրապարակվում և այլն։ Օ. Խալեցկին նշեց, որ երկու հակառակ ուղղությունների պատմաբանների վեճերը «օգտակար են և անհրաժեշտ», սակայն իրեն՝ որպես «քրիստոնեական փիլիսոփայության» կողմնակիցի,— ասաց նա,— «չի բավարարում Մարքսի պոզիտիվիզմը իր տնտեսական ֆակտորների հետ մեկտեղ»։ Այնուհետև նա հայտարարեց, որ ինքը դեմ չէ զեկուցման մեջ առաջ քաշված այն թեզին, որ պատմական գիտությունը պետք է պայքարի պատերազմի դեմ հանուն խաղաղության, սակայն դեմ է նրանց, ովքեր ուզում են ամբողջ աշխարհում կոմունիզմ հաստատել։ Ապա նա սկսեց քարոզել «քրիստոնեական պատմաբանների» հայացքները, ներկայացնելով դրանք որպես հումանիստական և ճնշման հակառակորդ։ (Այդ խոսքերը այնքան դուր եկան նախագահող, իտալական ռեակցիոն պատմաբան Վալսեկկուն, որ վերջինս տեղից ցատկեց և սեղմեց Խալեցկու ձեռքը)։ Հետո հանդես եկավ Պոլեարդը և հայտարարեց, որ սովետական պատմաբանների ընդհանրացումները դեկրետավորվում են «վերևից», իսկ Մ. Լացկոն դժգոհություն հայտնեց, որ զեկուցման մեջ որպես պրոգրեսիվ ուղղություն միայն մարքսիստական պատմագրությունն է ներկայացվում։ Պրոֆ. Բարտան մերկացնելով Խալեցկու և մյուսների տեսակետները նշեց, որ նրանք ցանկանում են ցույց տալ, որ իրենք «ազատության» էնտուզիաստներ են, սակայն փաստը այն է, որ ողջ բուրժուա-

կան աշխարհը բռնի ուժի ու ճնշման վրա է խարսխված։ Այստեղ նախագահը նրան արգելեց շարունակել, հիշեցնելով, որ «մենք պայմանավորվել ենք քաղաքականությանը չանդրադառնալ»։ Սակայն բուրժուական ռեակցիոն պատմաբանները իրականում ամբողջովին ամերիկյան ռեակցիոն գաղափարներն էին արտահայտում, հանդես գալով որպես իմպերիալիզմի ջատագովներ։

Մ. Վ. Նեչկինան ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով վեճի մեջ մտավ իր ընդդիմախոսների հետ և կոնկրետ փաստերով ցույց տվեց սովետական գիտության հսկայական հաջողություններն ու զարգացման հեռանկարները։

Բուռն ծափերով ավարտվեց ակադեմիկոս Մ. Վ. Նեչկինայի եզրափակման խոսքը, որը փայլուն ապացույց էր մարքսիստական պատմագրության խոշոր հաղթանակի։ Այդ զեկուցման ազդեցությունը կոնգրեսի աշխատանքներում այնքան ակնհայտ էր, որ «Համաշխարհային պատմության կոնցեպցիաներին» նվիրված նիստը, որի նախագահն էր ակադեմիկոս Ե. Մ. Ժուկովը, շատ խնդիրներում հենվում էր Նեչկինայի զեկուցման մեջ առաջ քաշված մեթոդոլոգիական հարցերի վրա։ Թե՛ զեկուցող Լ. Գոտտշալկը (ԱՄՆ) և թե՛ ելույթ ունեցողներ պրոֆ. Ժիգմոնտը (Հունգարիա) ու Բերդհոլդը (ԳԴՌ) ուղղակի վկայակոչում էին Նեչկինայի զեկուցման թեզերը։ Սոցիալիստական լագերի պատմաբանները դատապարտում էին եվրոպոցենտրիզմի հակագիտական գաղափարը, քննադատում Եվրոպայի հակադրումը Արևելքին և միաժամանակ նշում էին «ազիացենտրիզմի» կամ թե «աֆրիկանոցենտրիզմի» թեքումների վտանգը։ Այդտեղ ընդգծվեց նաև սովետական պատմաբանների կողմից հրատարակած «Համաշխարհային պատմության» բազմահատոր աշխատության դերը, որը մարդկային հասարակության պատմության մարքսիստական մեթոդոլոգիայով սինթեզման լավագույն փորձ է։ Սակայն զեկուցող Գոտտշալկը իր եզրափակման խոսքում ասաց, որ հայացքների տարբերության պատճառով հնարավոր չէ ստեղծել համաշխարհային այնպիսի պատմություն, որ բավարարի բոլորին։

Կոնգրեսում բուրժուական պատմաբանները ամեն կերպ քարոզում էին դասակարգային խաղաղություն, բայց միաժամանակ հարձակումներ էին գործում մարքսիստական-սոցիալիստական մեթոդոլոգիայի դեմ։ Օրինակ՝ «Սոցիալական կառուցվածքը և XIX—XX դդ. գրականությունը» թեմայով զեկուցման մեջ Կարլ Շորսկեն (ԱՄՆ) նշեց, որ «չպետք է պատմաբաններին բաժանել մարքսիստների և ոչ-մարքսիստների», սակայն, միաժամանակ, նա հեգնանքով ասաց, որ քննարկվող պրոբլեմը ընթանում է «սովետա-ամերիկյան բարեկամության» դրոշով։

Կոնգրեսում որոշ բուրժուական գիտնականներ ցանկանում էին օգտագործել բոլոր հնարավոր միջոցները իրենց հակակոմունիզմի գաղափարները տարածելու համար։ Ոմանք այդ անում էին օգտագործելով կոնգրեսի ամբիոնը կամ էլ հանդիպումների ու զրույցների ժամանակ, ոմանք էլ տարածում էին նախօրոք պատրաստած ու տպագրված հակասովետական գրություններ։ Մի ոմն Ֆեդենկո (Մյունխենի արևելյան ինստիտուտ) «ՍՍՌՄ համառոտ պատմության» վերաբերյալ իր դիտողություններում անհիմն հերյուրանքներ էր տարածում սովետական պատմաբանների հասցեին, ցանկանալով ամեն կերպ նսեմացնել Հոկտեմբերյան հեղափոխության և մեծ Լենինի դերը պատմության մեջ։ «Սլավոնների» հանձնաժողովի նիստում Ֆեդենկոյի ելույթի կապակցու-

թյամբ սովետական գիտնականների անունից հանդես եկավ պրոֆ. Գ. Նովիցկին և մերկացրեց նրա հակասովետական բարբաջանքները։

Սովետական Հայաստանից կոնգրեսին մասնակցում էին ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանը, Կ. Բ. Ուդումյանը և տողերիս հեղինակը։ Պրոֆ. Ա. Ռ. Հովհաննիսյանը ակտիվ մասնակցություն ունեցավ Ռոբեսպիերին նվիրված սեմինարին և որպես էքսպերտ ելույթ ունեցավ պրոֆ. Լուի Տրենարի «Համաշխարհային զարգացման հանրագումարը 1915 թվականին» զեկուցման շուրջը։ Նա հատկապես ընդգծեց 1789—1815 թթ. հասարակական մտքի զարգացման խնդիրները, որը բոլորովին շրջանցված էր Տրենարի կողմից։ Պրոֆ. Հովհաննիսյանը, որպես սոցիալիստական ուսմունքների ականավոր մասնագետ, նշեց այդ գաղափարների հանդես գալը, նրանց սոցիալ-քաղաքական ակունքներն ու նշանակությունը հասարակական մտքի զարգացման համար։

Տողերիս հեղինակը ելույթ ունեցավ պրոֆ. Կաննի (ԱՄՆ) «Ֆեդերալիզմը և ֆեդերատիվ պետությունները» զեկուցման մեջ առաջ քաշված այն թեզի դեմ, որտեղ նսեմացվում էր Անդրֆեդերացիայի դերը։ Մենք պրոֆ. Ի. Հուսեինովի հետ միասին կոնկրետ փաստերով ցույց տվեցինք Անդրֆեդերացիայի պատմական դերը հայ, վրաց և ադրբեջանական ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական վերածննդի գործում։ Գրավոր դիտողություններ ներկայացրինք նաև «Դիմադրական շարժումը Եվրոպայում» Անրի Միշելի (Ֆրանսիա) զեկուցման կապակցությամբ, նշելով զեկուցման այն թերությունը, որ անտեսվել էր դիմադրական շարժման ինտերնացիոնալ բնույթը ռուսների, իտալացիների, լեհերի, հայերի և ուրիշ ժողովուրդների մասնակցությունն ու հերոսական պայքարը ֆաշիզմի դեմ։ Պրոֆ. Ջորջևիչի «Բալկանյան ժողովուրդների պայքարը տնտեսական և ազգային ազատության համար 1875—1914 թվականներին» զեկուցման մասին մեր դիտողությունները վերաբերվում էին թուրքական դեսպոտիզմի դեմ բալկանյան ժողովուրդների և հայ ժողովրդի ազատագրական պայքարի կապերին։

* * *

Մտքերի աշխույժ փոխանակություն սկսվեց «Առաջին համաշխարհային պատերազմի տնտեսական և սոցիալական պրոբլեմները» թեմայի շուրջը (զեկուցողներ՝ Ա. Լ. Սիդորով, Վ. Ի. Բովիկին և Պ. Վ. Վոլոբուև), որը քննարկվում էր 4-րդ սեկցիայի («Մեթոդոլոգիական և խրոնոլոգիական պատմության») «Նոր և ժամանակակից պատմության» ենթասեկցիայում։ Սովետական գիտնականների կողմից ներկայացրած այդ զեկուցումը մեծ հետաքրքրություն առաջացրեց, որի շուրջը ելույթ ունեցան 20 հոգի, որից 8-ը սոցիալիստական երկրներից։ Վիճաբանությունները հիմնականում ծավալվեցին զեկուցման մեջ բարձրացված երեք հիմնական հարցի շուրջը, այն է՝ ա) պատերազմի ծագման պատճառները, բ) պատերազմի ժամանակ կապիտալիստական վերարտադրության ճգնաժամը, գ) սոցիալիստական հակասությունների սրումը և պատերազմող երկրների մասսաների հեղափոխականացումը։ Սոցիալիստական լագերի գիտնականներ Վ. Բաթելը, Փ. Կլայնը, Հ. Վոլգեմաթը, Ժ. Թոկդոյը, Ա. Դեասը և ուրիշներ հիմնականում պաշտպանեցին և նոր նյութերով լրացրին սովետական գիտնականների առաջ քաշած թեզերը։

Սակայն բուրժուական պատմաբանները՝ Ալան Թայլորը (Անգլիա), Հալլգարթենը (ԱՄՆ), Բամօնը (Ֆրանսիա), Վիլհելմ Թրեյը (ԳՖՌ) և ուրիշներ նշելով սովետական գիտնականների մեծ աշխատանքը, հիմնականում հանգես էին գալիս զեկուցման մեջ առաջ քաշված գլխավոր դրույթները մերժելու նպատակով։ Նրանց մի մասը ջանում էր ապացուցել, որ առաջին համաշխարհային պատերազմի առաջացման պատճառը իմպերիալիզմը չէ։ Այդ տեսակետը ավելի բացարձակ կերպով պաշտպանում էր Գ. Սմիթը (ԱՄՆ), որը հայտարարեց. «Զեկուցումը հրաշալի է, բայց այն հիմնվում է իմպերիալիզմը, որպես կապիտալիզմի բարձր ստադիա լենինյան տեսության վրա, այն դեպքում, երբ շատերը կասկածում են այն բանում, որ իմպերիալիզմն է հանդիսանում պատերազմի պատճառը»։ Նա ջանում էր ցույց տալ, որ մեծ տերությունների միջև գոյություն ունեցող տնտեսական հակասությունները չէին պատերազմի պատճառը, քանի որ դրանք մինչև պատերազմի սկսվելը իբր թե լուծված էին։ Մ. Բամօնը չնայած չէր բացառում տնտեսական հակասությունների դերը, բայց միաժամանակ հայտարարում էր, որ պատերազմի ծագման հիմնական պատճառները ոչ թե տնտեսական ֆակտորներն էին, այլ նացիոնալիզմն ու ժողովուրդների էքսպանսիոնիստական կիրքը։ Ուրիշ խոսքով. ըստ իմպերիալիզմի ջատագով պատմաբանների, պատերազմը հրահրեցին ոչ թե իմպերիալիստների աշխարհակալական և ժողովուրդներին ստրկացնելու ձգտումները, այլ իրենք ժողովուրդները։ Իսկ Վ. Թրեյն (ԳՖՌ) ուղղակի հայտարարեց, որ Գերմանիայի ղեկավար շրջանները բոլորովին մասնակից չէին պատերազմի հրահրմանը, որ այդ նրանց համար ուղղակի «սյուրպրիզ» էր։ Այդ միտքը պաշտպանեց նաև Գ. Կոտովսկին (Արևմտյան Բեռլին), ջանալով ցույց տալ, որ պատերազմի ծագման գործում գերմանական խոշոր կապիտալի շահերը շատ չնչին դեր են կատարել, որ Գերմանիան իբր թե տնտեսապես չի պատրաստվել պատերազմի համար։ Սակայն նման կարգի բացարձակ կեղծիքները առարկություն առաջացրին հենց իրենց մի շարք բուրժուական գիտնականների կողմից։ Դ. Հալլգարթենը (ԱՄՆ) նշեց գերմանական իմպերիալիզմի զավթողական պլանների, իսկ Հ. Պոգգեն և Փ. Սթրանդմանը՝ նրա էկոնոմիկան պատերազմին ծառայեցնելու պլանների մասին։

Բուրժուական գիտնականների մի ուրիշ խումբ հանդես եկավ զեկուցման մեջ առաջ քաշված այն օրինաչափության դեմ, ըստ որի պատերազմող երկրների տնտեսական և սոցիալական կյանքի փոփոխությունների մեջ ընդհանուր գիծ է նկատվում։ Տ. Մեյերը (ԱՄՆ) իր ելույթում հայտարարեց, որ պետք էր ընդգծել պատերազմող երկրների տարբերություններն ու առանձնահատկությունները և ոչ թե ջանալ նմանություններ գտնել նրանց միջև։ Դրա համար էլ նրա զեկուցման մեջ հարցերը գլխի վրա էին շրջված։ Բուրժուական պատմաբանը բացասելով զարգացման ընդհանուր օրինաչափությունը ճգնում էր ապացուցել, որ հեղափոխական պայթյունը Ռուսաստանում բացառիկ և պատահական երևույթ էր հատուկ տվյալ երկրին, որը պայմանավորվում էր պատերազմական իրադրությամբ և ոչ թե բխում էր զարգացման ընդհանուր օրինաչափությունից։

Անգլիական հայտնի բուրժուական պատմաբան Ա. Թայլորը հանդես գալով զարգացման ընդհանուր օրինաչափության դեմ պնդում էր, որ պատերազմի ազդեցությունը հետամնաց և զարգացած երկրների վրա միանգամայն տարբեր է. առաջինների նկատմամբ նա այն ազդեցությունն ունեցավ, որ վերջ

տվեց «հին կարգերին», իսկ երկրորդների միջև ստեղծեց միավորում։ Եվ վերջապես նա հանգում է այն մտքին, որ «կոպիտ սխալ կլինի կարծել, որ պատերազմը հանգեցնում է կապիտալիզմի թուլացմանը...»։ Այսպիսով, բուրժուական գիտնականը փաստորեն արդարացնում և դրական կողմեր է տեսնում իմպերիալիստական ավերիչ պատերազմի միջև։

Բուրժուական պատմաբանների տեսակետները խիստ քննադատության ենթարկվեցին սոցիալիստական երկրների գիտնականներ՝ Փ. Կլայնի, Վ. Բարթելի, Հ. Վոլգեմութի (ԳԴՌ), Յու. Տակադի (Հունգարիա), Թ. Իեդրուշազոկի (Լեհաստան), Վ. Բովիկինի և Պ. Վալոբուևի եզրափակիչ խոսքում։

Կոնգրեսում հատուկ քննարկման նյութ դարձավ նաև «Առաջին համաշխարհային պատերազմի քաղաքական պատմությունը», որի մասին լսվեց Գ. Ռիտտերի (ԳՖՌ) և Փ. Էնգել-Յանոշի (Ավստրիա) զեկուցումները։ Արևմտա-գերմանական ռեակցիոն պատմագրությունը ամեն կերպ աշխատում է արդարացնել կայզերական Գերմանիայի պետական կարգն ու ղեկավարությունը, ցույց տալ, որ պատերազմի հրահրման և սկսման գործում նա որևէ մեղք չունի։ Սակայն այդ կեղծիքը սովետական պատմաբանների հետ մեկտեղ մերկացնում են հատկապես Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայի պատմաբանները Փ. Կլայնի գլխավորությամբ։ Այդ տեսակետից մեծ հետաքրքրություն էր առաջացրել Համբուրգի պատմաբան Ֆ. Ֆիշերի «Թռիչք համաշխարհային տիրապետության համար» աշխատությունը, որի մեջ ասված է ճշմարտությունը գերմանական իմպերիալիզմի ավազակային պլանների մասին 1914—1918 թվականներին։ ԳՖՌ-ի ռեակցիոն պատմաբանները կատարելով Ֆ. Ի. Շտրաուսի քաղաքական պատվերները ձգտում են ստեղծել «ճակատ Ֆիշերի դեմ»։ 1964 թ. լույս տեսավ արևմտա-գերմանական ռեակցիոն պատմագրության առաջնորդ Գ. Ռիտտերի «Պետական արվեստը և ռազմական արհեստը» աշխատության 3-րդ հատորը, որտեղ նա փորձում է ոչնչացնել Ֆիշերի կոնցեպցիան։ Վիեննայի կոնգրեսին ներկայացրած Գ. Ռիտտերի զեկուցումը ամբողջովին հակաֆիշերյան կոնցեպցիայի արդյունք էր, այդ հարցն էլ դարձավ քննարկման կենտրոնական խնդիրը։ Ռիտտերը ինքը չէր կարողացել ներկայանալ կոնգրեսին, նրա անունից հանդես եկավ Էրդմանը, որը սակայն ի վիճակի չէր պաշտպանելու Ռիտտերի բոլոր թեզերը։

Մեծ հետաքրքրություն առաջացրեց Ֆ. Ֆիշերի ելույթը, որը կոնկրետ փաստերով ցույց տվեց, որ գերմանական իմպերիալիզմի «ռազմական նպատակները» ձևակերպվել և պլանավորվել են Գերմանիայի ղեկավար շրջանների կողմից դեռ մինչև 1914 թ. պատերազմը։ Նրանք կանխատեսում էին հնարավոր ռազմական խմբավորումները։ Ֆ. Ֆիշերը կոնկրետ փաստեր բերեց այն մասին, որ 1914 թ. հունիսին Բետմանը և մյուս գերմանական պետական գործիչները հենվում էին Անգլիայի չեզոքության վրա։ Սակայն կարևորը այն չէ, նշում է Ֆիշերը, թե ինչ էին մտածում պետական գործիչները, այլ ի վերջո այն, թե ինչպես էին նրանք պլանավորում և իրագործում իրենց ագրեսիվ պրյանները։ Ֆ. Ֆիշերի ելույթը ավարտվեց բուռն ծափերով։ Թեթևակի և ոչ լուրջ փաստարկումներով Ֆ. Ֆիշերի հայացքների դեմ արտահայտվեցին ԳՖՌ-ի պատմաբաններից Է. Շխելին, Գ. Մոմզենը և Է. Խոլդինը։ Նախկինում նացիզմի ակտիվ ջատագով Խոլդինը ջանում էր ցույց տալ, որ իբր Ռուսաստանն է հանդիսացել պատերազմը սկսելու գլխավոր պատճառը։ Նա պնդում էր, որ իբր 1912—1913 թթ. Ռուսաստանի կառավարող շրջանները եկան այն եզրա-

կացության, որ ոչ թե պատերազմը, այլ խաղաղությունը առաջ կբերի հեղափոխություն։ Սոցիալիստական երկրներից՝ պատմաբան Կլայնը նոր փաստեր բերեց գերմանական իմպերիալիստների հանցավոր գործողությունները մերկացնելու ուղղությամբ, Նիկովը ընդգծեց, որ Գերմանիայի ղեկավարող շրջաններում տարաձայնությունները վերաբերվում էին միայն տակտիկական հարցերին, իսկ ագրեսիայի ընդհանուր խնդիրներում նրանք հանդես էին գալիս միասնաբար։ Փելները (Ավստրիա) ցավով նշեց, որ արևմտա-գերմանական պատմաբանները մինչև հիմա էլ աղետ են համարում 1918 թ. (Գերմանիայի պարտությունը) և ոչ թե 1914 թ. (գերմանական ագրեսիայի սկիզբը)։

Իսկ Ֆիշերի աշակերտ Գրեյսը (ԳՖՌ) ընդգծեց, որ վերջնականապես պետք է ջախջախված համարել Գերմանիայի «անմեղության» վերսիան, որ իբր բոլոր երկրները ակամա սահելով՝ պատերազմի մեջ մտան։ Սոցիալիստական երկրների պատմաբաններ Բատովսկին, Պետրովիչը և ուրիշներ դատապարտեցին իմպերիալիստական պատերազմը։

Ընդհանուր առմամբ առաջին համաշխարհային պատերազմի պրոբլեմների քննարկումը կարևոր նշանակություն ունեցավ։ Սոցիալիստական երկրների պատմաբանները գոհունակությամբ ընդգծեցին Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայի պատմաբանների ղեկավար Փ. Կլայնի առաջարկը՝ ուժեղացնել տարբեր երկրների գիտնականների համագործակցությունը գիտական բարդ պրոբլեմները համատեղ մշակելու և հաճախակի միջազգային նման քննարկումներ կազմակերպելու համար։

Իմպերիալիզմի ջատագով պատմաբանների տեսակետները ամբողջովին ցույց տվին իրենց սնանկությունն ու հակաժողովրդական էությունը։

* * *

Կոնգրեսում արծարծվող կարևոր պրոբլեմներից մեկը «Նացիոնալիզմը և ինտերնացիոնալիզմը XIX—XX դարերում» պրոբլեմն էր, որը քննարկվեց 1-ին սեկցիայում ակադեմիկոս Վ. Մ. Խվոստովի նախագահությամբ։ Հիմնական զեկուցումով հանդես եկավ ամերիկյան ռեակցիոն պատմաբան պրոֆ. Գ. Կոնը։ Զեկուցումը պարունակում էր մի շարք հետաքրքիր նկատառումներ և դիտումներ, սակայն ամբողջովին վերցրած այն կառուցված էր միանգամայն հակագիտական, էկլեկտիցիզմի և իդեալիզմի հիմունքներով։ Այնպիսի հարցեր, ինչպիսիք են ազգի ձևավորումը, ազգային իդեոլոգիայի ծագումը, կապիտալիզմի վերաճումը իմպերիալիզմի, ֆաշիզմի էության բացահայտումը և բազմաթիվ այլ հարցեր ներկայացվեցին ծուռ հայելու մեջ։ Զեկուցումը մեծ մասամբ կրում էր պոլեմիկական բնույթ և նորագույն պատմության պրոբլեմների գնահատման հարցում ուղղված էր մարքս-լենինյան իդեոլոգիայի դեմ։

Մեթոդոլոգիական սխալ դրույթների հետևանքով, զեկուցման մեջ խառը վիճակով պատկերացվեցին ազգային ճանաչողությունը, ազգային գիտակցության զարգացումն ու նացիոնալիզմը, ինտերնացիոնալիզմը, կոսմոպոլիտիզմը և այլն։

Նման դրույթներից ելնելով, պրոֆ. Կոնը գտնում է, որ նացիոնալիզմը իր արտահայտությունն է գտնում ազգային պետության մեջ և հանդիսանում է պատմության առաջ մղող կարևոր ուժ։ Նա նշում է, որ նացիոնալիզմը ծա-

դել է XVIII դարի վերջին, ֆրանսիական հեղափոխության ժամանակ և իր վառ արտահայտությունն է գտել XIX դարի Իտալիայի, Գերմանիայի և Բալկանների միավորման համար առաջացած շարժումների մեջ։ Նացիոնալիզմը սկզբնական շրջանում դիտվում էր որպես ժողովուրդների հեղափոխական դեմոկրատական շարժում, որը չէր հակասում ինտերնացիոնալիզմին, իսկ XIX դարի վերջերից այն դարձավ «հիմնականում կոնսերվատիվ կամ ռեակցիոն շարժում»։ Այդ նացիոնալիզմը, նշում է պրոֆ. Կոնը, հակադրվում է ինդուստրիալ բանվորների և հողազուրկ գյուղացիների ինտերնացիոնալ շարժմանը։ Այդ նոր «ինտերնացիոնալիզմին» առանձնապես ետպատերազմյան շրջանում (1918—1945 թթ.) խիստ կերպով հակադրվում է հարկադրական նացիոնալիզմը, հատկապես ֆաշիզմը։ Պրոֆ. Կոնը այն կարծիքն է հայտնում, որ ֆաշիզմը կապիտալիզմի վերջին ստադիայի գաղափարախոսություն չի հանդիսանում, այլ այն ձգտում է պաշտպանել նախակապիտալիստական շրջանի սոցիալական հիերարխիայի դրույթները, և ֆաշիզմը վերացավ որպես պետության դինաստիական ձև։ Ուրիշ խոսքով, նա ամեն կերպ ձգտում է ապացուցել, որ ֆաշիզմը կապիտալիզմի արատը չէ, այլ ինչ-որ նախակապիտալիստական դինաստիական հիերարխիայի վերականգնման փորձ, որը դուրս է կապիտալիզմի զարգացման օրինաչափությունից և անցողիկ երևույթ է։

Ահա պրոֆ. Կոնի կոնցեպցիայի բուն էությունը։ Մյուս կողմից նա նշում է նաև այն հանգամանքը, որ նացիոնալիզմը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տարբերվում է դարասկզբի նացիոնալիզմից։ Որ այդ նոր նացիոնալիզմը ձեռք բերեց ժողովրդահեղափոխական բնույթ, որպիսին նրան հատուկ էր մինչև 1948 թ., որը սակայն նոր էտապում ավելի լայն տարածում ստացավ և ժողովրդական մասսաներին պետական և հասարակական կյանքի ակտիվ մասնակից դարձրեց։ Պրոֆ. Կոնը այն կարծիքն է հայտնում, որ նացիոնալիզմը դարձավ «սոցիալիստական» և սոցիալիզմը՝ պատրիոտիստական և նացիոնալիստական, որը և իր վրա վերցրեց «ազգերի և ժողովուրդների ապագայի գործը»։ Ըստ նրա, եթե 1917 թ. մարքսիզմը մերժում էր նացիոնալիզմը, ապա հետագայում ծագեց «սովետական նացիոնալիզմը»։ Նա հակադրում է Պոկրովսկու տեսակետը 1940-ական թվականների սովետական պատմագրությանը, որտեղ ցարիզմի գաղութային քաղաքականությունը ներկայացվում է որպես «չարիքի փոքրագույնը» նվաճված ժողովուրդների համար։ Կասկած չկա, պնդում է պրոֆ. Կոնը, որ նացիոնալիզմը հզոր ուժ է։ Նա ճգնում էր ցույց տալ, որ կոմունիզմի և նացիոնալիզմի միաձուլումը հանդես է գալիս ՍՍՌՄ և մյուս կոմունիստական երկրներում, որտեղ հաստատվում է անկախություն ազգային յուրահատուկ բնույթով։ Սակայն պրոֆ. Կոնը չէր կարող չնշել, որ Աֆրիկայում, Ասիայում և Լատինական Ամերիկայում առաջացած շարժումները իրենց նացիոնալիստական բնույթով հանդերձ հարում են «սոցիալիզմին»։ Բուրժուական գիտնականը ցավով է նշում այն փաստը, որ նոր վերածնվող ու արթնացող ազգերը առավելությունը տալիս են սոցիալիզմին, և ոչ թե կապիտալիզմին, քանի որ նրանք սոցիալիզմի մեջ տեսնում են հասարակական ընդհանուր շահերի պաշտպանություն ու զարգացում, մինչդեռ կապիտալիզմը նպաստում է անհատականությանը և մասնավոր շահերի զարգացմանը։ Ինտերնացիոնալիզմի զարգացման էտապները պրոֆ. Կոնը պատկերացնում է հետևյալ սխեմայով, այն հանդես է գալիս XIX դարում, երբ այդ գաղափարը առաջ են քաշել ազգային միավորման շարժման առաջնորդները,

որը հատկապես ուժեղացավ XIX դարի վերջից մինչև 1914 թ., ինտերնացիոնալի աշխատավորական և բանվորական կուսակցությունների գործունեության շնորհիվ։ 1918 թ. ինտերնացիոնալիզմը խիստ թուլացավ բանվորական շարժման պառակտման շնորհիվ։ Պատերազմի ժամանակ ակնհայտ դարձավ, որ նացիոնալիզմը ավելի ուժեղ է, քան ինտերնացիոնալիզմը։ Այդ պառակտման արդյունք էր նաև պայքարը տարբեր ինտերնացիոնալների միջև։

Հետո նշվում է, որ ինտերնացիոնալիզմը իր արտահայտությունն է գտել 1919 թ. պայմանագրերում, միջազգային համագումարներում և կոնֆերանսներում, ընդհանուր շահերով շահագրգռված գիտնականների կապերի մեջ, պատմական գիտության ասպարեզում, պատմությանը ընդհանուր համաշխարհային մասշտաբով պատկերացնելու կոնցեպցիայում և այլն։ Սակայն ինտերնացիոնալիզմի պատկերացումը իր ցայտուն արտահայտությունը գտավ միավորված ազգերի կազմակերպության մեջ, որին մասնակցում են մեծ և փոքր բազմաթիվ պետություններ։ Նշվում է, որ ժողովուրդների ապագան կապված կլինի նրանց ավելի սերտ համագործակցության և կապերի հետ։

Պրոֆ. Կոնի մի շարք հայտարարություններ բացարձակ պրովոկացիոն բնույթ էին կրում։ Նա, օրինակ, կոնգրեսում ունեցած ելույթում հայտարարում էր, որ լենինիզմը հանդես գալով ինտերնացիոնալիզմի դրոշով, հետագայում հանգեց նացիոնալիզմի, որի արտահայտությունն էր Ալբանիայի, Չինաստանի և Ռումինիայի նացիոնալիզմը։ Դրան հակառակ նա ջանում էր ցույց տալ, որ իբր թե ինտերնացիոնալիզմը այժմ զարգանում է այլ հողի վրա։ Որպես օրինակ նա մատնացույց արեց ժամանակակից կաթոլիկ եկեղեցին, որը իբր թե տենդենց ունի տարբեր գաղափարների համակեցություն ստեղծելու։ Առհասարակ պրոֆ. Կոնը ցանկանում էր ցույց տալ, որ գաղափարների պայքարը գնալով թուլանում և նրանց միջև եղած հակասությունները վերանում են։ Իր այդ միտքը հաստատելու համար նա նշեց, որ կոմունիստ և բուրժուական պատմաբանների միջև Հռոմի միջազգային կոնգրեսում անդունդ կար, որը սակայն վերջին տարիների ընթացքում իբր թե համահարթվում է։

Պրոֆ. Կոնի զեկուցման շուրջը քաղաքական սուր բանավեճ սկսվեց, որին մասնակցեցին 33 մարդ, որոնցից 10-ը կապիտալիստական երկրներից, 23-ը մարքսիստ պատմաբաններ էին՝ սոցիալիստական երկրներից, այդ թվում 5-ը ՍՍՌՄ-ից։

Պրոֆ. Կոնի հիմնական թեզերը, այն է՝ նացիոնալիզմի ինտերնացիոնալիզմի մեկնաբանումը կտրված նրանց դասակարգային բովանդակությունից և տնտեսական պայմաններից, ինտերնացիոնալիզմի և կոսմոպոլիտիզմի նույնացումը և այլն, պաշտպանություն գտան մի շարք բուրժուական պատմաբանների կողմից։

Պատմաբան Էրդմանը (ԳՖՌ) XX դարի 20-ական թվականների ֆրանսիական բուրժուական նացիոնալիզմը համեմատության մեջ է դնում «սովետական կոմունիզմի» հետ, իսկ ՄԱԿ-ը պատկերացվում է որպես ժամանակակից ինտերնացիոնալիզմի արտահայտություն։

Շտուրցը (Ավստրիա) ելնելով զեկուցման իդեալիստական սկզբունքներից, ժամանակակից ինտերնացիոնալիզմը ջանում էր տեսնել եվրոպական ինտեգրացիայի մեջ, որը իբր թե ապահովում է անհատի ազատությունը։

Խալեցկին պաշտպանելով պրոֆ. Կոնի թեզերը, ցանկացավ ապացուցել, որ կաթոլիկական եկեղեցին տրադիցիոն կերպով պաշտպանում է ինտերնա-

ցիոնալիզմը, որ նա իբր հանդես է եկել XIX—XX դարերի ազգային ազատագրական շարժումների պաշտպանության դերում և այժմ պաշտպանում է ապագաղութացման պրոցեսը։

Սոցիալիստական երկրների պատմաբանները խիստ քննադատության ենթարկեցին պրոֆ. Կոնի զեկուցման մեթոդոլոգիական սխալ դրույթները։ Սովետական գիտնականներ ակադեմիկոս Ե. Մ. Ժուկովը, Ա. Ա. Գուբերը, Ա. Լ. Նարոչնիցկին, Ս. Լ. Տիխվինսկին քննարկվող պրոբլեմների մասին բուրժուական պատմաբանների վերացական դրույթներին հակադրեցին կոնկրետ դասակարգային վերլուծման մեթոդը։ Սովետական պատմաբանների այդ դրույթները ամբողջովին պաշտպանեցին սոցիալիստական երկրների մարքսիստ պատմաբաններ Բանեինը և Կոնստանտինեսկուն (Ռումինիա), Ռեյնմանը (Չեխոսլովակիա), նրանք քննադատեցին պրոֆ. Կոնին այն բանի համար, որ նա շփոթում էր այնպիսի տարբեր հասկացություններ, ինչպիսիք են ազգային պրոգրեսիվ շարժումները ռեակցիոն նացիոնալիզմի և անգամ ֆաշիզմի հետ կամ թե ինտերնացիոնալ համերաշխությունը կոսմոպոլիտիզմի հետ և այլն։ Պրոֆ. Կոնի սխալ հայացքները քննադատեց նաև ֆրանսիացի մարքսիստ-պատմաբան Պիեր Վսլարը, որը ընդգծեց սոցիալական ուժերի գնահատման կարևոր նշանակությունը։

Պրոֆ. Շմիդտը (ԳԴՌ) իր ելույթում բացահայտեց նացիոնալիզմի դասակարգային էությունը, Ս. Լ. Տիխվինսկին (ՍՍՌՄ) ցույց տվեց, որ Ասիայում զարգացող նացիոնալիզմը հետևանք է ներքին սոցիալ-տնտեսական պրոցեսների։ Չինաստանի օրինակով նա ապացուցեց, որ այստեղ նացիոնալիզմը առաջանում է XIX դարի վերջերից։ Նա ամբողջովին մերժեց պրոֆ. Կոնի այն սխալ թեզը, որ իբր նացիոնալիզմը Արևմտյան Եվրոպայից է ներմուծվել Ասիայի և Աֆրիկայի երկրները առաջին համաշխարհային պատերազմից հետո։

Մարքսիստ պատմաբանները հատկապես ընդգծում էին այն փաստը, որ նացիոնալիզմի ուժեղացումը XX դարում պայմանավորվում է իմպերիալիստական ռեակցիայի ուժեղացման հետ, որը ծնում է այնպիսի երևույթներ, ինչպիսիք են ֆաշիզմը և ռասիզմը։ Ա. Լ. Նարոչնիցսկին քննադատեց պրոֆ. Կոնին այն բանի համար, որ նա իր զեկուցման մեջ բոլորովին շրջանցել է նացիոնալիզմի այնպիսի ռեակցիոն ձևը, ինչպիսին ռասիզմն է, որը ժողովուրդների բռնագրավման և ստրկացման իդեոլոգիական հիմքն է կազմում։

Ակադեմիկոս Ե. Մ. Ժուկովը հատկապես ընդգծեց, որ ժամանակակից ազգային-ազատագրական շարժումները հակաիմպերիալիստական բնույթ ունեն և ուղղված են ամենառեակցիոն ուժերի դեմ։

Քննարկվող հարցերի մեջ մարքսիստ պատմաբանները հատուկ ուշադրություն դարձրին պրոլետարական ինտերնացիոնալիզմի վրա, որը սակայն բուրժուական պատմաբանների կողմից անտեսվեց։ Ակադ. Ժուկովը ընդգծեց, որ ինտերնացիոնալիզմի ծագումն ու զարգացումը կապված է բանվոր դասակարգի պայքարի հետ։ Այդ միտքը պաշտպանեցին սոցիալիստական երկրների պատմաբանները։ Պրոֆ. Շմիդտը նշեց կոմունիստական մանիֆեստի դերը ինտերնացիոնալիզմի զարգացման գործում։ Պրոֆ. Էրենին (Հունգարիա) լուսաբանեց այդ հարցի դրվածքը Կ. Մարքսի կողմից 1-ին ինտերնացիոնալում։ Պրոֆ. Լինևիչը (Լեհաստան) քննադատեց բուրժուական պատմաբանների կողմից կաթոլիկությանը վերագրվող «ինտերնացիոնալիզմը»։

. Խիստ քննադատվեց պրոֆ. Կոնի այն տեսակետը, որ իբր գաղութային երկրների ազգային-ազատագրական շարժման կապը սոցիալիզմի գաղափարի հետ արհեստական է և անցողիկ։ Ա. Ա. Գուբերը ընդգծեց, որ ազատագրվող շատ ժողովուրդներ իրենց ազգային ձգտումները, պետական և սոցիալական խոշոր վերափոխումները կապում են սոցիալիզմի գաղափարի հետ։

Քննադատվեց նաև պրոֆ. Կոնի այն անհիմն կարծիքը, ըստ որի նացիոնալիզմի զարգացումը հետևանք է սոցիալիստական պետությունների առաջացման և սոցիալիստական ազգերի ձևավորման և, որ ինտերնացիոնալիզմը իբր թե գնալով բանվորական շարժման մեջ, կորցնում է իր հողը և զարգանում է այլ հիմքերի վրա։ Բուրժուական պատմագրությունը ամեն կերպ ջանում է անտեսել սոցիալիստական երկրների միջև զարգացող ինտերնացիոնալ կապերը, ազգային-ազատագրական շարժումների պաշտպանությունը նրանց կողմից, պայքարը խաղաղության ու դեմոկրատիայի համար։ Ակադեմիկոս Ե. Մ. Ժուկովը ցույց տվեց ազգային հարցի դրվածքի տարբերությունը կապիտալիստական և սոցիալիստական երկրներում։ Սոցիալիստական երկրների գիտնականները՝ պրոֆ. Շմիդտը (ԳԴՌ) վերլուծեց կոմունիստական շարժման ազգային քաղաքականությունը ներկա էտապում, պրոֆ. Ռեյմանը (Չեխոսլովակիա), հակառակ պրոֆ. Կոնի, ցույց տվեց, որ հակասություն չկա ժողովուրդների ազատագրական շարժման, ազգային պետությունների զարգացման մի կողմից՝ և ինտերնացիոնալիզմի միջև՝ մյուս կողմից։ Նա ընդգծեց, որ բանվոր դասակարգի տեսակետից, ազգերի ինքնորոշման իրավունքը՝ դա ինտերնացիոնալիզմի անխզելի մասն է։ Իսկ Պոպեսկուն (Ռումինիա) ընդգծեց այն միտքը, որ սոցիալիստական ազգերի զարգացումը չի հակասում ինտերնացիոնալիզմի գաղափարին։ Կովալսկին (Լեհաստան), քննադատելով պրոֆ. Կոնին, ցույց տվեց սոցիալիստական հայրենասիրության և բուրժուական նացիոնալիզմի արմատական տարբերությունը։ Մերժվեց նաև պրոֆ. Կոնի այն թյուր կարծիքը, որ սովետական հանրապետություններում ինտերնացիոնալիզմի և նացիոնալիզմի տենդենցների միջև դեռևս հավասարակշռություն չի ստեղծվել։ Այսպիսով, սոցիալիստական երկրների պատմաբանները, հանդես գալով միասնական ճակատով, հակահարված տվեցին պրոֆ. Կոնի դրույթներին թե՛ մեթոդոլոգիական և թե՛ կոնկրետ պատմական փաստերի աղավաղման հարցերում։

Այդ սեկցիայում հիմնական զեկուցումից բացի լսվեցին նաև երեք ենթազեկուցումներ՝ կոնկրետ պատմական թեմաներով։ Պ. Ռենալի (Ֆինլանդիա) ֆիննական ազգի զարգացման մասին, Լ. Վալյատի (Իտալիա) զեկուցումը «Քաղաքական հոսանքների զարգացումը Իտալիայում և Ավստրո-Հունգարիայի անկումը (1914—1918 թթ.)», Վ. Կերեստեշկուի (Ռումինիա) զեկուցումը «1948 թ. հեղափոխությունը Հունգարիայում»։ Այդ ենթազեկուցումներից առաջին երկուսը բանավեճ առաջ չբերին։ Լ. Վ. Վալյատին իր զեկուցման մեջ այն միտքը զարգացրեց, որ ինտերնացիոնալիզմը արտահայտվում է առաջին հերթին հարևան երկրների նկատմամբ։ Այդ առումով էլ նա ընդգծեց իտալո-հարավսլավական բարեկամության ամրապնդման անհրաժեշտությունը։

Պրոֆ. Կոնը օգտագործելով հունգարական և ռումինական պատմաբանների որոշ հակասությունները, պրովոկացիոն կերպով հայտարարեց, որ այժմ մարքսիզմին հատուկը ոչ թե ինտերնացիոնալիզմն է, այլ նացիոնալիզմը, որ ինտերնացիոնալիզմը այժմ զարգանում է ոչ թե սոցիալիզմի երկրներում, այլ

Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որտեղ իբր նեգրերը իրենց ազատ են զգում։ Այդ կեղծիքը իր ելույթում մերկացրեց ակադ. Վ. Մ. Խվոստովը, որը կոնկրետ փաստերով ցույց տվեց նեգրերի իրավազուրկ և հալածված վիճակն ու ռասիզմի անկաշկանդ զարգացումը ԱՄՆ-ում, որը XX դարի նացիոնալիզմի զարգացման ծայրահեղ ձևն է։ Նա նշեց, որ պրոֆ. Կոնի զեկուցման ամենաարատավոր կողմը դա ռասիզմի թերագնահատումն է, որի մերկացումը անբավարար տեղ գտավ նաև մյուս ելույթների մեջ։

Այսպիսով, պատմաբանների միջազգային կոնգրեսում քննարկվող պրոբլեմները ընթացան երկու կոնցեպցիաների՝ մարքսիզմի և բուրժուական իդեոլոգիայի սուր հակամարտության պայմաններում, որտեղ մարքսիստական մեթոդոլոգիայի անպարտելի ուժի ազդեցությունը ամենուր զգացվում էր։

Կոնգրեսի աշխատանքը ցույց տվեց, որ մարքսիստ պատմաբանների լաները գնալով ուժեղանում և միավորվում է, իսկ բուրժուական բանակում նկատվում է ճեղքվածք և մանրատվածություն։ Հատկապես ֆրանսիական պատմագրության մեջ առաջացած հոսանքները, մասնավորապես Բրաուդելի և Լաբրուսսի գլխավորությամբ հակում ունեն դեպի մարքսիզմը։ Սովետական պատմագրությունը առաջ է քաշում խոշոր պրոբլեմներ, մինչդեռ բուրժուական պատմագրությունը տառապում է փաստերի կույր շարադրանքով։ Սակայն սովետական պատմաբանների աշխատությունները և բիբլիոգրաֆիական տեղեկությունները օտար լեզուներով քիչ են հրատարակվում և նրանք մնում են արտասահմանի գիտնականների համար անմատչելի։ Նման վիճակը սովետական պատմական գիտության ազդեցության ոլորտները համաշխարհային առումով նեղացնում է։